Արձանագրություն

«Մար Գրուպ 1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Փոքր Վեդի բնակավայրում գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրամաս կառուցելու աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկում /1-ին լսում/

**ք. Վեդի** **22.12.2023թ.**

2023 թվականի դեկտեմբերի 20-ին, ժամը 15:00-ին«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման հավելվածի համաձայն, ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի վարչական շենքում տեղի ունեցավ «Մար Գրուպ 1» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Փոքր Վեդի բնակավայրում գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրամաս կառուցելու աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկում /1-ին լսում/ :

Հանրային քննարկմանը մասնակցում էին Վեդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հ.Ստեփանյանը, Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ներկայացուցիչներ, Փոքր Վեդի բնակավայրի վարչական ղեկավար՝ Կ. Ստեփանյանը և գլխավոր մասնագետ՝ Վարդան Զադոյանը, «Մար Գրուպ 1» ՍՊԸ –ի տնօրեն՝ Ա. Մարտիրոսյանը և աշխատակիցներ, «Յուլի-Դալի» ՍՊԸ-ի տնօրեն՝ Լ. Փաշինյանը և բնապահպանական խորհրդատու՝ Զարուհի Զուռնաչյանը , (մասնակիցների ամբողջական ցանկը կցվում է արձանագրությանը):

Վեդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հ. Ստեփանյանը հայտարարեց հանրային լսումների վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությունը և ներկայացրեց համայնքապետարանի կողմից պատասխանատու ներկայացուցիչ՝ Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Շ. Բաքոյանին:

Այնուհետև խոսքը փոխանցվեց «Յուլի-Դալի» ՍՊԸ-ի բնապահպանական խորհրդատու՝ Զարուհի Զուռնաչյանին, վերջինս ներկայացրեց «Մար Գրուպ 1» ՍՊԸ-ի ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Փոքր Վեդի բնակավայրում գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրամաս կառուցելու աշխատանքների իրականացման ծրագիրը և ծրագրի նպատակները:

Այնուհետև տեղի ունեցավ քննարկում, կարծիքների փոխանակում, հարց ու պատասխան:

Վեդու համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ՝ Շ. Բաքոյանը հնչեցրեց համայնքին հուզող մի շարք հարցեր՝

1.Սեփական տարածք է արդյոք, պատասխան ՝ այո սեփական տարածք է:

2.Որքան մակերես է զբաղեցնելու արտադրամասը, պատասխան՝ 1.6 հա. ընդարձակվելու տեղ ևս ունեն:

3.Ոնց եք կազմակերպելու կոյուղաջրերի հեռացումը, պատասխան՝կլինեն մեխանիկական մնացորդները նստեցնելու ջրամբարներ, արդեն առանց մնացորդների ջուրը կմղվի Գինեվետի կոյուղատարին:

4.Որն է լինելու արտադրությունում օգտագործվող ջրի աղբյուրը, պատասխան՝բանակցություններ են վարում «Վեոլիա Ջուր» ընկերության հետ, առաջիկայում պարզ կդառնա և հաջորդ լսմանը կներկայացվի:

5.Որքան աշխատատեղ է լինելու,առաջարկ՝ բացառությամբ նեղ մասնագետներից, աշխատանքներում առաջարկում ենք ընդգրկել ազդակիր Վեդի համայնքի բնակիչներին, պատասխան՝ շինարարական աշխատանքներ կատարելու են մինչև 20-աշխատակից, իսկ արտադրությունում մինչև 100-աշխատակից, ամբողջությամբ ընդգրկվելու են համայնքի բնակիչներ:

6.Սոցիալ-տնտեսական ներդրումների Ձեր տեսլականը համայնքում, պատասխան՝կքննարկվի համայնքի հետ:

Այնուհետև համայնքապետարանի աշխատակից, գլխավոր մասնագետ՝ Ս. Կարապետյանը հարց ուղղեց ընկերությանը՝

1.Տվյալ տարածքի կեսաբազմազանության ուսումնասիրություն կատարվել է արդյոք, պատասխան՝ հանրային քննարկման 2-րդ փուլում կներկայացվի:

2.Արտանետումները կառավարվելու են արդյոք, պատասխան՝ այո, կիրառվելու է նոր տեխնոլոգիա:

3.Արտադրության ընթացքում գոյացած թափոնները ինչպես են կառավարվելու, պատասխան՝ պայմանագիր կկնքվի աղբահանություն իրականացնող ընկերության հետ:

Ամփոփելով հանրային քննարկման արդյունքները և համայնքի դրական արձագանքը, ազդակիր Վեդի համայնքի ներկայացուցիչները հավանություն են տալիս «Մար Գրուպ 1» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Փոքր Վեդի բնակավայրում գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրամաս կառուցելու աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հաշվետվության հանրային քննարկմանը /1-ին լսում/, հաշվի առնելով համայնքապետարանի հետևյալ առաջարկությունները.

1. Սոցիալական ներդրումների չափը հստակեցնելու դեպքում հաշվի առնել, այն հանգամանքը, որ Վեդի համայանքը ունի 18 գյուղական և 1 քաղաքային բնակավայր:
2. Նախատեսվող գործունեությունում 70% աշխատատեղերը տրամադրել ազդակիր Վեդի համայնքի բնակիչներին, հաշվի առնելով վերջիններիս 3 /երեք/ տարվա հաշվառում և անշարժ գույք ունենալու հանգամանքը:
3. Կանաչապատման բնագավառում իրականացնել ծառատունկ:
4. Սահմանափակել և վերահսկել բեռնատար մեքենաների գերբեռնվածությունը՝ ըստ տեխնիկական վկայականի:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 1 թերթ և հանրային քննարկումների էլեկտրոնային կրիչը:

Քննարկումների պատասխանատու՝

ՀՀ Արարատի մարզի

Վեդի համայնքի ղեկավար՝ / / Գ. Սարգսյան

Ձեռնարկող՝ «Մար Գրուպ 1» ՍՊԸ-ի տնօրեն՝ / / Ա. Մարտիրոսյան

Պատասխանատու՝ / / Շ. Բաքոյան

Արձանագրող՝ / / Ս. Կարապետյան

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

«Մար Գրուպ 1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Փոքր Վեդի բնակավայրի տարածքում գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրամաս կառուցելու աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի վարչական շենքում 20.12.2023թ. տեղի ունեցած հանրային քննարկումների /1-ին փուլ/

Ք.Վեդի
20.12.2023թ.

| h/h | Անուն, Ազգանուն | Զբաղեցրած պաշտոնը | Ստորագրություն |
|---|---|---|---|
| 1. | [illegible] | [illegible] | [illegible] |
| 2. | [illegible] | [illegible] | [illegible] |
| 3. | [illegible] | [illegible] | [illegible] |
| 4. | [illegible] | [illegible] | [illegible] |
| 5. | [illegible] | [illegible] | [illegible] |
| 6. | [illegible] | [illegible] | [illegible] |
| 7. | [illegible] | [illegible] | [illegible] |
| 8. | [illegible] | [illegible] | [illegible] |
| 9. | [illegible] | [illegible] | [illegible] |
| 10. | [illegible] | [illegible] | [illegible] |
| 11. | [illegible] | [illegible] | [illegible] |
| 12. | [illegible] | [illegible] | [illegible] |
| 13. | [illegible] | [illegible] | [illegible] |
| 14. | [illegible] | [illegible] | [illegible] |
| 15. | [illegible] | [illegible] | [illegible] |
| 16. | | | |
| 17. | | | |
| 18. | | | |
| 19. | | | |